ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/05

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Ընկերության ներկայացուցիչներ՝ Ա. Հովհաննիսյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 17.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել թիվ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/3» ծածկագրով գնանշման հարցման պատվիրատուին փոփոխություններ կատարել «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի հետ կնքվող պայմանագրի 1-ին հավելվածում՝ դրանում նախատեսելով նաև 3-րդ և 35-րդ չափաբաժինները:

Բողոքներ քննող անձի 17.04.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 23.04.2019թ., 2904.2019թ., 08.05.2019թ., 15.05.2019թ. և 17.05.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 15.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.05.2019թ.:

2. «Ալֆա ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ալֆա ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«18.03.2019թ. «Ալֆա ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն հայտ է ներկայացրել մասնակցելու «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/3» ծածկագրով գնանշման հարցմանը:

Գնահատող հանձնաժողովի 22.03.2019թ. որոշմամբ 3,35,44,50 չափաբաժիններով ընկերությունը Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցնող մասնակից:

29.03.2019թ. պատվիրատուն gnumner.am կայքում հրապարակել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, որտեղ առկա են գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված 3,35,44,50 չափաբաժինները:

08.04.2019թ. պատվիրատուն ուղարկել է պայմանագրի նախագիծը, որից բացակայում է 3-րդ և 35-րդ չափաբաժինները:

Ընկերությունը 08.04.2019թ. գրություն է ուղարկել պատվիրատուին խնդրելով պարզաբանել, թե ինչ հիմքերով են 3-րդ և 35-րդ չափաբաժինները հանվել պայմանագրից:

Պատվիրատուն 09.04.2019թ. էլեկտրոնային հասցեի միջոցովպատասխանել է, որ այդ չափաբաժինները չեն համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:

Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 22.03.2019թ. որոշումից հետո գնահատող հանձնաժողովը որևէ այլ որոշում, այդ թվում 3-րդ և 35-րդ չափաբաժիններով այլ անձի ընտրված մասնակից ճանաչելու մասին չի ընդունել, ընկերությունից որևէ փաստաթուղթ կամ այլ նյութեր չի պահանջվել:»:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրել է պարտավորեցնել թիվ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/3» ծածկագրով գնանշման հարցման պատվիրատուին փոփոխություններ

կատարել «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի հետ կնքվող պայմանագրի 1-ին հավելվածում՝ դրանում նախատեսելով նաև 3-րդ և 35-րդ չափաբաժինները:

3. <u>«Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 19.04.2019թ. գրությամբ դիմել է «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Պատվիրատուի ներկայացուցիչը ներկայացել է նշանակված նիստին, սակայն վերջինիս լիազորագիրը պատշաճ կազմված չի եղել:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտեր է ներկայացրել նաև «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 3-րդ, 35-րդ, 44-րդ և 50-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն:

Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2019/3» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշումը, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 28-ի թիվ 7 որոշմամբ:

Նույն որոշմամբ սահմանվել է մասնակիցների շահած չափաբաժինների գները և համարները, որի համաձայն՝ 3-րդ, 35-րդ, 44-րդ և 50-րդ չափաբաժինների մասով «Ալֆա ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից:

Պատվիրատուն 08.04.2019թ. Ընկերությանը ուղարկել է պայմանագրի նախագիծը, որից բացակայել է 3-րդ և 35-րդ չափաբաժինները:

Ընկերությունը 08.04.2019թ. գրություն է ուղարկել պատվիրատուին խնդրելով պարզաբանել 3-րդ և 35-րդ չափաբաժինները պայմանագրի նախագծից հանելու մասին տեղեկատվություն:

Պատվիրատուն 09.04.2019թ. էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով պատասխանել է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում 3-րդ և 35-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը չեն բավարարել «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրերին և այդ պատճառով վերը նշված չափաբաժինները հանվել են առաջարկվող պայմանագրից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Բի էլ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝ հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը:

Օրենքի 36-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով

նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

22.04.2019թ. Հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 3-րդ, 35-րդ, 44-րդ և 50-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն:

Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2019/3» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշումը, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ մարտի 28-ի թիվ 7 որոշմամբ:

Նույն որոշմամբ սահմանվել է մասնակիցների շահած չափաբաժինների գները և համարները, որի համաձայն՝ 3-րդ, 35-րդ, 44-րդ և 50-րդ չափաբաժինների մասով «Ալֆա ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն Ընթացակարգի 3-րդ և 35-րդ չափաբաժինների մասով ընտրված/հաղթող/ մասնակից է ճանաչվել այն պարզ պատճառաբանությամբ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից բավարար է գնահատվել Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի նախատեսված պահանջներին: Հակառակ դեպքում պայմանագիր կնքելու որոշման մեջ չէին ներառվի նշված չափաբաժինները որպես շահած չափաբաժիններ, այլ կհայտարարվեր դրանց չկայացման, կամ այլ մասնակցի այդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչելու մասին, ուստի, տվյալ պարագայում Պատվիրատուի գործողությունները եղել են ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել թիվ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կայացնել համապատասխան որոշում՝ պայմանագրի նախագծի 1-ին հավելվածում նաև 3-րդ և 35-րդ չափաբաժինները ներառելու մասին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ